ԷՋՄԻԱԾՆԻՑ—ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ

Զերդ Կայսերական Մեծութիւն Ամենաբարեպաշտ Թագաւոր

Ռամանովների Օգոստափառ Տան փառաւոր թագաւորութեան երեքհարիւրամեայ հանդիսաւոր-վրդական այս Մեծ Յոբելեանի հանդիսաւոր օրը, Միածնաէջ Տաճարում ուրբ պատարագ մատուցանելիս և հանդիսաւոր մաղթանք կատարելիս, Աստուածային սեղանի առաջ, Էջմիածնի վանքի միաբանութեան և իմ հօտի հետ վերառաքում եմ ջերմ աղօթքներ և խնդրում եմ Ամենաբարձրեալ Աստուծուն՝ պարգևել երկար տարիներ ԶԵՐԴ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, ամենաբարեպաշտ Թագուհի Կայսրուհիներին, սիրելի Թագաժառանգին և Ռամանովների ամբողջ Օգոստափառ Տանը, ի փառս և յուրախութիւն Թանգագին Հայրենիքի՝ Ռուսաց մեծ Պետութեան։ Բազդ ունիմ ամենահպատակօրէն շնորհաւորել Մեծ Յոբելեանը, արկանելով առ աստ ԶԵՐԴ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ իմ, հայ հոգևորականութեան և հայ ազգի ամենահաւատարիմ զգացմունքները։

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ